ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
Մանկավարժահոգեբանական աջակցման մասնախմբի նիստի

Նիստը կայացել է 2026 թվականի փետրվարի 27-ին:

Նիստին մասնակցել են մանկավարժահոգեբանական աջակցման մասնախմբի 8 անդամներից 7-ը:

Օրակարգում՝

1. Նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ Լ. Սեյրանյան)
2. Նախորդ նիստի ժամանակ կայացված որոշումների կատարման մասին մասնախմբի ղեկավարի զեկուցում:
3. Դասալսումների նախնական ժամանակացույցի ներկայացում:
4. Այլընտրանքային հաղորդակցման միջոցների ներդրումը՝ որպես խելամիտ հարմարեցում 11 աշակերտի կրթության կազմակերպման գործընթացում:

Լսեցին՝

1. Մանկավարժահոգեբանական աջակցման մասնախմբի ղեկավար՝ Լ. Սեյրանյանը ներկայացրեց նիստի օրակարգը՝ բաղկացած 4 հարցից:

Լսեցին՝

2. Մ/մ ղեկավար Լ. Սեյրանյանը ներկայացրեց նախորդ նիստի որոշումների կատարման մասին զեկույց, որտեղ նշեց, որ ինչպես և որոշվել էր մասնախմբի անդամներն այս ամիս ևս ակտիվ ներգրավված են եղել և աջակցություն են ցուցաբերել ուսուցիչներին և դաստիրակներին պլանավորված միջոցառումների իրականացման գործընթացում: Նշվեց, որ մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամները, համաձայն նախորդ նիստի համար 4 որոշման, ամենօրյա կարգով գրանցում են իրականացրած անհատական և խմբային աշխատանքները մասնախմբի ղեկավարի առաջարկած ձևաթղթում: Նշվեց նաև, մասնախմբի անդամների մասնակցության կարևորությունը, մինչև օրս հրավիրված ԱՈՒՊ-ների քննարկումներին: Մասնախմբի ղեկավարը հորդորեց մ/մ անդամներին շարունակել պատշաճ կերպով մասնակցել նախատեսված քննարկումներին:

Լսեցին՝

3. Մ/մ ղեկավար Լ. Սեյրանյանը ներկայացրեց մ/մ անդամների պարապմունքների մշտադիտարկման նախնական ժամանակացույցը և սահմանեց դասալսումների հիմնական նպատակը, որն է՝ «Խելամիտ հարմարեցումների արդյունավետությունը»: Նշեց, որ այդ շրջանակում դիտարկվելու է, թե որքանով են հաղորդակցման այլընտրանքային միջոցներն օգնում սովորողներին ներգրավվել պարապմունքներին և/կամ դասապրոցեսում:

Լսեցին՝

4. Մ Մ/մ ղեկավար Լ. Սեյրանյանը և մանկավարժահոգեբանական թիմի անդամները ներկայացրին, որ իրականացված աշխատանքների, դիտարկումների և ուսուցիչների հետ քննարկումների արդյունքում ըստ առաջնահերթության առանձնացվել են խոսքի և հաղորդակցման դժվարություններ ունեցող 11 սովորողներ՝ Ադրիանա Քոչարյան (2ա), Վահագն Գալստյան (2ա), Սամվել Ղարիբյան (3բ), Արամ Հակոբյան (1ա), Արեգ Ֆլջյան (3ա), Գիճեան Մովսէս (3ա), Միշել Ալոյան (4ա), Միքայել Նիկոյան (4բ), Հովհաննես Մովսիսյան (7բ), Էրիկ Էյվազյան (8-րդ դասարան), Գառնիկ Հայրապետյան (8-րդ դասարան), որոնց լիարժեք ներգրավվածությունն ուսումնական գործընթացում ապահովելու նպատակով անհրաժեշտ է կիրառել հաղորդակցման այլընտրանքային հաղորդակցման միջոցներ:

Որոշում է

1. Հաստատել մասնախմբի փետրվարի 25-ի նիստի օրակարգը:
2. Ընդունել ի գիտություն նախորդ նիստի որոշումների կատարման վերաբերյալ մասնախմբի ղեկավարի զեկուցումը՝ արձանագրելով, որ իրականացված աշխատանքների արդյունքները եղել են գոհացնող:
3. Հաստատել դասալսումների նախնական ժամանակացույցը, կցել սույն արձանագրությանը՝ որպես հավելված (1) և մինչև դասալսումների մեկնարկը հաստատման նպատակով ներկայացնելով տնօրինությանը:
4. Հիմք ընդունելով սովորողների զարգացման առաջնահերթությունները, առկա դժվարությունները և ԱՈՒՊ-ներով սահմանված նպատակները՝ դիմել տնօրինությանը՝ թվով 11 սովորողի համար խելամիտ հարմարեցումների շրջանակում այլընտրանքային հաղորդակցման տեխնիկական սարքերի ձեռքբերման և կիրառման գործընթացը կազմակերպելու նպատակով:
5. Նշված սարքերի կիրառումը ներառել ուսումնական գործընթացում՝ որպես պարտադիր խելամիտ հարմարեցում:
6. Այլընտրանքային հաղորդակցման տեխնիկական սարքերի անվանացանկը՝ ըստ սովորողների, կցել արձանագրությանը որպես հավելված (2):

Նախագահ՝ **Լ. Սեյրանյան**

Քարտուղար՝ **Գ. Եսայան**

03.03.2025

Հավելված 1
Մանկավարժահոգեբանական աջակցման մասնախմբի
2025-2026 ուսումնական տարվա
թիվ 7 նիստի արձանագրության

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ	Մասնագետի անուն, ազգանուն	Ամսաթիվ	Ծառայության տեսակը	Սովորող	ժամ
1.	Արուսիկ Թաիրյան	06.03.2026	հատուկ մանկավարժ	Արամ Հակոբյան 1-ին ^{Ա}	11:30-12:00
2.	Գեղեցիկ Եսայան	06.03.2026	հոգեբան	Դանիել Պետրոսյան 4-րդ^{Ա}	12:00-12:30
3.	Ասպրամ Աթոյան	09.03.2026	էրգոթերապիա	Մարիա Ֆարաջյան1^{Բ}	11:30-12:00
4.	Մարիետա Էյվազյան	09.03.2026	էրգոթերապիա	Արմեն Պողոսյան 6^{Ա}	12:00-12:30
5.	Մարիամիկ Ղազարյան	11.03.2026	լոգոպեդ	Էրիկ Էյվազյան 8	11:30-12:00
6.	Նաիրա Փիրումյան	13.03.2026	հեքիաթաթերապիա	Հովհաննես Մովսիսյան 7^{Բ}, Գերասիմ Բաղդասարյան 3^{Ա}, Ռաֆիկ Գոլովորյան 5^{Բ}	11:30-12:00
7.	Արփինե Ասատրյան	18.03.2026	հատուկ մանկավարժ	Միշել Ալոյան 4^{Ա}	11:30-12:00

Հավելված 2
Մանկավարժահոգեբանական աջակցման մասնախմբի
2025-2026 ուսումնական տարվա
թիվ 7 նիստի արձանագրության

ԽԵԼԱՄԻՏ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Անուն, ազգանուն	Դասարան	Սարքի անվանում
1.	Արամ Հակոբյան	1ա	Speech Generating Devices / QUICKTALKER FEATHERTOUCH 7
2.	Ադրիանա Քոչարյան	2ա	Speech Generating Devices / QUICKTALKER FEATHERTOUCH 7
3.	Վահագն Գալստյան	2ա	Speech Generating Devices / ITALK 4 / STEP-BY-STEP
4.	Արեգ Ֆլջյան	3ա	Speech Generating Devices / QUICKTALKER FEATHERTOUCH 7
5.	Արեգ Սարգսյան	2ա	Speech Generating Devices / QUICKTALKER FEATHERTOUCH 12

6.	Սամվել Ղարիբյան	3բ	Speech Generating Devices / QUICKTALKER FEATHERTOUCH 7
7.	Միշել Ալոյան	4ա	Speech Generating Devices / ITALK 2 / STEP-BY-STEP
8.	Միքայել Նիկոյան	4բ	Speech Generating Devices / ITALK / STEP-BY-STEP Little կամ Little Mack
9.	Հովհաննես Մովսիսյան	7բ	Speech Generating Devices / QUICKTALKER FEATHERTOUCH 23
10.	Էրիկ Էյվազյան	8-րդ	Speech Generating Devices / QUICKTALKER FEATHERTOUCH 12
11.	Գառնիկ Հայրապետյան	8-րդ	Speech Generating Devices / QUICKTALKER FEATHERTOUCH 12